ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1963 Общественные науки

Շ. Աճառեան

Լ. Ն. ՏՈԼՍՏՈՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԲ

Մարքսիստական գեղագիտության և գրական քննադատության մեջ Վ. Ի. Լենինի և Գ. Վ. Պլեխանովի հոդվածները ռուսական հանճարեղ գրող Լև Նիկոլայևիչ Տոլստոյի ստեղծագործության և նրա ուսմունք-տոլստոյականության մասին առանձնահատուկ տեղ են գրավում։

Այդ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ մեր աչքի առաջ ցայտուն կերպով երկու բացարձակ հակադիր հայացք, միմյանց հակասող երկու տարբեր մոտեցում են դրսևորվում դեպի ռուս մեծ գրողի երկերի և ուսմունքի արժեքավորումը։ Այս ամենի հետևանքով էլ երկու միմյանց հիմնովին բացասող գնահատական է տրվում Լ. Ն. Տոլստոյին որպես գրողի, մտածողի և բարոյախոսի։

Աշխատենք տալ Լ. Ն. Տոլստոյի ստեղծագործության և ուսմունքի նկատմամբ այդ մոտեցման ու բացահայտման երկու հակադիր գնահատականների համառոտ շարադրանքը, անցկացնել զուգահեռ նրա պլեխանովյան և լենինյան գնահատման միջև և ցույց տալ նաև տարբեր արժեքավորումների պատճառները։

Գ. Վ. Պլեխանովը ռուսական մեծ գրողին բնորոշել է որպես կյանքից կտրված, ժողովրդի հետ կապ չունեցող մի ազնվականի, որի մոտ իշխողը «արիստոկրատ արվեստագետի հոդերանությունն» է։

Վ. Ի. Լենինն, ընդհակառակը, Լ. Ն. Տոլստոյի մեծությունը գտել է նրանում, որ մեծ գրողն արտահայտել է այն տրամադրություններն ու իդեաները, որոնք ստեղծվել են հասարակ ժողովրդի ռուս գյուղացիության ամենալայն խավերի մեջ ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությանը նախորդող ժամանակաշրջանում։ Նա հատուկ մատնանշում է, որ Տոլստոյի հայացքների հանրագումարը արտահայտել է ռուսական առաջին հեղափոխության առանձնահատկությունը, որպես գյուղացիական-բուրժուական հեղափոխության։

Լ. Ն. Տոլստոյին տված իր գնահատականում Պլեխանովը մեծ գրողին որակել է որպես ժամանակակից կյանքից այն աստիճանի հեռացած ու կտրված մի մարդու, որ նույնիսկ ծիծաղելի է համարել խոսել Տոլստոյի՝ կյանքի հետ կենդանի կապ ունենալու մասին։

Վ. Ի. Լենինն, ընդհակառակը, գտել է, որ հանճարեղ գրողը մեծ ուժով, հաստատակամությամբ, ինչպես և անկեղծությամբ մի շարք կենսական բնույթ ունեցող հարցեր է առաջադրել, որոնք անմիջականորեն ժամանակակից կյանքի «քաղաքական և հասարակական կառուցվածքի հիմնական գծերի հետ են առնչվում»։

Պլեխանովը պարզապես գտնում էր, որ Տոլստոյը ռուսական առաջին հեղափոխության հետ ոչ մի առնչություն չուներ և չէր էլ կարող ունենալ։

Վ. Ի. Լենինն, ընդհակառակը, Լ. Ն. Տոլստոյին իր ժամանակաշրջանի մեծ գրողն ու գեղագետը համարեց։ Այդ գնահատականից էլ ելնելով նա մատնանշեց, որ մեծ գրողն ու արվեստագետը, եթե նա իսկապես այդպիսին է, չի կարող իր ստեղծագործության մեջ չարտացոլել իր ապրած դարաշրջանը. ռուսական առաջին ժողովրդական մեծ հեղափոխության էական մի քանի կողմերը, չի կարող այդ հեղափոխության հայելին չլինել։

Պլեխանովը գտնում էր, որ Լ. Ն. Տոլստոյը «ոչ միայն մեր արիստոկրատիայի զավակը և նրա գաղափարախոսն է, այլև նրա հանճարեղ վեպերում նկարագրվում է մեր ազնվականության կյանքը, թեպետ և այն իդեալականացման չենթարկելով, բայց այնուամենայնիվ իր գրական կոչմամբ»[1]։

Վ. Ի. Լենինն այս հարցում ևս բոլորովին հակադիր կարծիք է հայտնել։ Նա գտնում է, որ Լ. Ն. Տոլստոյը կարողացել է կտրվել իր դասակարգից և Ռուսաստանի բազմամիլիոն գյուղացիական մասսաների գաղափարախոսը դառնալ։

Լ. Ն. Տոլստոյի ուսմունքի—տոլստոյականության մեջ գոյություն ունեցող հակասությունների պատճառը Պլեխանովը համարում էր այն, որ իբր թե Տոլստոյի մոտ միաժամանակ հանդես էին գալիս, այսպես կոչված «հեթանոսությունը», այսինքն ձգտումը դեպի կյանք, հետևաբար և դեպի ժամանակավորը, և թե դեպի քրիստոնեական ասկետիզմ, այսինքն կյանքից կրոնի և հավերժականության ասպարեզն անցնելու ձգտումը։ Այսպիսով, ըստ Պլեխանովի, Տոլստոյի մեջ երկու սկզբունք են մաքառել. ձգտումը դեպի կյանքը և կյանքից հեռանալու կրոնական-միստիկական ցանկությունը։ Պլեխանովի կարծիքով. «Քրիստոնեան, որի աչքում մարդու երկրային կյանքը, ավել թե պակաս չափով, միայն հարմար էտապ է դեպի արքայությունը տանող ճանապարհին, Տոլստոյի մեջ պայքարում էր հեթանոսի հետ, որին թվում էր այս կյանքը լի է իմաստով»[2]։

Տոլստոյականության մեջ եղած հակասությունների միակ պատճառը հենց այս է, հավատացնում էր Պլեխանովը։ Սրան պետք է ավելացնել նաև այն, որ Տոլստոյի կողմից ապրած այս տրագեդիան ոչ այլ ինչ է, եթե ոչ գրողի անձնական ողբերգությունը։ Այն տրագեդիան է մի մարդու, որը հասարակության մեջ, սոցիալական կյանքը և այդ կյանքում եղած մարդկային հարաբերությունները ուսումնասիրելու փոխարեն (որոնց հանդեպ Լ. Ն. Տոլստոյն, ըստ Պլեխանովի կարծիքի, միանգամայն անտարբեր է) զբաղվում է բացառապես ինքն իրենով. այսինքն՝ անալիզի է ենթարկում իր անձնական-հոգեկան կյանքը։

Սրան հակառակ Վ. Ի. Լենինը գտնում է, որ Տոլստոյի հայացքների և ուսմունքի հակասությունները, նրա տրագեդիան անձնական բնույթ չէր կրում և ոչ էլ նրա անձնական մտքի հակասությունների արդասիքն էիր։ Դա արդյունքն էր այն վերին աստիճանի բարդ և հակասական պայմանների, սոցիալական ազդեցությունների և պատմական տրադիցիաների, որոնք պայմանավորել և որոշիչ են հանդիսացել ռուսական հասարակության տարբեր դասակարգերի և գանազան խավերի հոգեբանության ետոեֆորմային, սակայն մինչ հեղափոխական Ռուսաստանում։

1 Գ. Վ. Պլեխանով. Երկեր (ռուսերեն), հ. 24, էջ 225։

2 Նույն տեղում, էջ 216։

Վ. Ի. Լենինն կյանքի և ռեալ իրականության մեջ կատարվող երևույթներին մարքսիստական թեորիայի տեսանկյունից նայելով, դրանք դիալեկտիկորեն ուսումնասիրելով, նրանց ընդհանուր հասարակական ընթացքի մեջ հասարակության զարգացումն ու առաջընթացն էր տեսնում։ Նա հասարակական հարաբերությունների շարժման ու փոփոխման մեջ տեսնում էր հասարակության զարգացումը, որն ընթանում էր վերընթաց գծով, այսինքն պարզից դեպի բարդը և ստորին աստիճանից դեպի բարձրը։ Լենինը հավատարիմ մնալով մարքսիստական դիալեկտիկային, հասարակական կյանքում տեղի ունեցող երևույթների ուսումնասիրության ժամանակ ընդգծում է, որ նրանց օբյեկտիվ շարժումը, փոփոխումն ու զարգացումը տանում էր դեպի կապիտալիզմի խորտակումը և սոցիալիզմի հաղթանակը։

Դիալեկտիկորեն մոտենալով հասարակական կյանքի երևույթներին, Վ. Ի. Լենինը դրանք ուսումնասիրում էր պատմության զարգացման օբյեկտիվ բնույթ կրող օրենքների հետ կապված և միասնաբար։ Հենց այս տեսանկյունով էլ նա մոտենում էր մեծ գրողի ստեղծագործությանը, նրա հասարակական-քաղաքական հայացքների գնահատությանը։

Գ. Վ. Պլեխանովը ցանկանալով ցույց տալ Լ. Ն. Տոլստոյի անտարբեր վերաբերմունքը դեպի կյանքն ու իրեն շրջապատող աշխարհը, վերցրել է նրա «Աննա Կարենինա» վեպի հերոսներից մեկին՝ Կոնստանտին Լևինին։ Տոլստոյի այդ հերոսը, ըստ Պլեխանովի, «բացարձակապես անտարբեր է դեպի այն ամենը, ինչ դուրս է մնում նրա ընտանեկան բարեկեցության սահմաններից»։ Նրա կարծիքով ինքը՝ Տոլստոյն էլ, որը համակրանքով է վերաբերվում Լևինին, իրական կյանքի նկատմամբ բացարձակապես անտարբեր է, որովհետև նա լավագույն դեպքում «բարձր խավերի կենցաղագիրն է» և կամ «ազնվական բների կենցաղագիրը»։

Լ. Ն. Տոլստոյի՝ կենդանի կյանքի ու նրա երևույթների նկատմամբ ունեցած վերաբերմունքը ցույց տալու համար, Վ. Ի. Լենինը նույնպես վերցնում է նրա հերոս Կոնստանտին Լևինին և ցույց տալիս, որ պատկերը բոլորովին այլ է։ Մեջբերումներ կատարելով Լևինի խոսքերից, Վ. Իլյիչը ցույց է տալիս լևինների, նշանակում է և Տոլստոյի ոչ անտարբեր վերաբերմունքը դեպի իրենց ապրած դարաշրջանը, հնի խորտակման և «ամեն ինչ տակն ու վրա լինելու» դարաշրջանը, երբ կալվածատիրոջ ու գյուղացու ռեալ հարաբերությունների հարցը օրվա հիմնական խնդիրն էր դառել։

Վ. Ի. Լենինն, ի հակադրություն Պլեխանովի, գտնում էր, որ Տոլստոյը ոչ միայն ժողովրդից կտրված և անտարբեր չէր դեպի իր շրջապատի աշխարհը, այլև հանդես էր գալիս ուտոպիական-սոցիալիստական ինչ-որ ուսմունքով, որի մեջ նա արտացոլում էր տասնյակ միլիոնավոր հողազուրկ գյուղացիության կողմից առաջ քաշվող կալվածատիրական հողատիրությունն ու հողօգտագործման սիստեմը ոչնչացնելու, հողը գյուղացիության տալու կոնկրետ բնույթ կրող հարցերը։

Ինչ խոսք կարող է լինել այն մասին, որ Տոլստոյը չէր կարող հասկանալ ռուսական առաջին հեղափոխությունը, բանվորական շարժման էությունը և ոչ էլ սոցիալիզմի համար մղվող պրոլետարական մասսաների պայքարի նշանակությունը։ Սակայն Տոլստոյը կյանքից և հատկապես ռուսական գյուղացիության կյանքից, երբեք կտրված չի եղել։ Ընդհակառակը։ Նա օրիգինալ է հենց այն

բանով, որ իր հայացքների ամբողջությամբ ռուսական առաջին, գյուղացիական-բուրժուական հեղափոխությունն է արտացոլում։

Այսպիսին է Լ. Ն. Տոլստոյի ստեղծագործության և նրա ուսմունքի Լենինյան գնահատությունը, որը մեծ գրողի ստեղծագործությանն և ուսմունքին Պլեխանովի տված գնահատականից արմատապես տարբեր է։

* * *

Իսկ ի՞նչն է այդ տարբերության պատճառը։

Ինչի համար հետևողական մարքսիստական դիրքերից ելնող Վ. Ի. Լենինի և իրեն նույնպես մարքսիստ համարող և այդպիսին ճանաչված Գ. Վ. Պլեխանովի կողմից միևնույն երևույթի նկատմամբ միմյանց բոլորովին հակասող գնահատական և արժեքավորում է տրվում։

Դրա հիմնական պատճառն այն է, որ Տոլստոյի գնահատման և արժեքավորման հարցում Լենինը ելնում է իր արտացոլման թեորիայից, իսկ իր տեսակետները շարադրում է ելնելով իր գեղագիտական հայացքի հիմնական դրույթներից։ Իսկ Գ. Վ. Պլեխանովի էսթետիկայի հիմնական դրույթները մեզ հետևյալն են ասում.

ա) Գրողի և գեղագետի ստեղծագործության ուղղությունը որոշվում է նրա դասակարգի կյանքի պայմաններով, որոնց հետ անմիջականորեն շփվում է նաև ինքը, գրողը։ Նրա դասակարգի, կենսական պայմաններն օբյեկտիվ բնույթ ունեն, այսինքն կախված չեն տվյալ դասակարգի կամքից և ցանկությունից։

բ) Գրողը, բանաստեղծը, նկարիչը, երաժիշտը և այլն իր դասակարգի կյանքի այդ պայմաններից կտրված չէ։ Նա չի կարող կտրվել նաև այն օբյեկտիվ պայմաններից, որոնք ստեղծվել են իր դասակարգի կյանքի համար, նշանակում է և իր ստեղծագործության համար։

գ) Գրողը, բանաստեղծը, գեղագետն ընդհանրապես իր ստեղծագործության մեջ նկարագրում է հենց այդ օբյեկտիվ պայմանները։ Նշանակում է նրա ստեղծագործության բովանդակությունը իր դասակարգի կյանքն է և նրա վերարտադրությունը։

դ) Յուրաքանչյուր բանաստեղծ, գրող, նկարիչ ու երաժիշտ սուբյեկտիվորեն, այսինքն ելնելով իր դասակարգի շահերից, նկարագրում է իրականությունը։ Նշանակում է յուրաքանչյուր դասակարգի գրող իր տեսակետից և յուրովի ճիշտ է։ Այլ կերպ չի էլ կարող լինել։

Գեղագիտական իր այս կոդեքսից ելնելով, Պլեխանովը պահանջում էր մարքսիստական էսթետիկայից ոչ թե դատապարտել կամ արդարացնել այս կամ այն գրողին ու գեղագետին, ոչ էլ նրանց ցուցմունքներ և ուղղություն տալ, այլ ցույց տալ, թե ինչու համար է տվյալ երկը երևան եկել։ Նրա կարծիքով մարքսիստական գեղագիտությունը պետք է համակրանքով վերաբերվեր «Գեղարվեստի բոլոր ձևերին և բոլոր ուղղություններին, անդամ նրանց, որոնք ամենից հակասականն են թվում»։

Ինչպես տեսնում ենք, Պլեխանովի էսթետիկայի դրական կողմը, անշուշտ, նրա կողմից գեղարվեստի դասակարգայնության ընդունումն է։ Սակայն նրա գեղագիտական թեորիայում հանդես են գալիս և սխեմատիզմ և թե միաժամանակ բուրժուական օբյեկտիվիզմի ցայտուն տարրերը, որովհետև նա ընդունում

է, որ գեղարվեստի բոլոր ձևերի ու բոլոր ուղղությունների գոյությունը օբյեկտիվորեն անհրաժեշտություն են ներկայացնում։

Եթե գեղարվեստի բոլոր ուղղությունները և յուրաքանչյուր գրող ու գեղագետ իրավացի են, այդ դեպքում ո՞րտեղ պետք է փնտրել առաջավոր և ռեակցիոն գեղարվեստի, առաջավոր և ռեակցիոն գրողի գնահատության չափանիշը։

Օրինակ, միևույն ժամանակ լույս տեսած «Մայրը» վեպի հեղինակ Ա. Մ. Գորկին է ճիշտ, թե «Սանին» պոռնոգրաֆիկ վեպի հեղինակ Մ. Պ. Արցիբաշև։ Պլեխանովի դրույթներից ելնելով, պիտի ասել, որ երկուսն էլ իրավացի են ու ճիշտ, որովհետև նրանք երկուսն էլ կյանքի օբյեկտիվ պայմանների արդյունք են։

Ելնելով իր էսթետիկայի այն դրույթից, որ գրողի, գեղագետի ստեղծագործության պայմաններն իր դասակարգի կյանքի պայմաններն են, Պլեխանովը գտնում էր, որ գրողն անպայման և անհրաժեշտաբար պետք է նկարագրի այդ պայմանները։ Նա իրավունք չունի և չի կարող դուրս գալ իր դասակարգի կյանքի այդ պայմաններից գեղարվեստական ստեղծագործության մեջ։ Այս դրույթից ելնելով էլ նա Լ. Ն. Տոլստոյին «մինչև եղունգների ծայրը աղա», «կյանքից կտրված արիստոկրատ», «ազնվականության բների կենցաղագիր» և կամ ռուսական ազնվականության գաղափարախոսը պետք է համարեր։ Չէ որ Տոլստոյը կալվածատեր ազնվական էր, կոմս, հետևաբար նա, ըստ Պլեխանովի, պետք է միայն ու միայն իր դասակարգի իղձերն ու ձգտումներն արտահայտեր։ Նա պետք է ռուսական ազնվականության գաղափարախոսը լիներ, որովհետև, ինչպես գրում է Պլեխանովը», «ուռենու վրա խնձորներ չեն աճում»։

Վ. Ի. Լենինն, ընդհակառակը, Տոլստոյի ստեղծագործությունը, ինչպես և նրա ուսմունքը՝ տոլստոյականությունը դիտում էր Ռուսաստանի կոնկրետ միջավայրում տեղի ունեցող պատմական անցքերի կապակցությամբ, հասարակության մեջ այն ժամանակ գոյություն ունեցող բոլոր դասակարգերի միջև ընթացող դասակարգային պայքարի լույսի տակ։ Եվ հենց այս ամենը հաշվի առնելով է, որ նա մեծ գրողի ստեղծագործությանը, ինչպես և նրա ուսմունքին՝ տոլստոյականությանը տվեց իսկական մարքսիստական, լենինյան գնահատություն։

Համաշխարհային պրոլետարիատի հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինի էսթետիկական հայացքների հիմքում ընկած է նրա արտացոլման թեորիան. «ընության արտացոլումը մարդու մտքում պետք է հասկանալ ոչ թե «մեռած», ոչ թե «աբստրակտորեն», ոչ թե առանց շարժման, ոչ թե առանց հակասությունների, այլ հավերժ շարժման հակասությունների առաջացման և նրանց լուծման պրոցեսում»[3]։

Տարածելով իր արտացոլման թեորիան գեղարվեստական ստեղծագործության ուսումնասիրության ընդգավառում, Լենինը գտավ, որ գրողը, գեղագետը ոչ միայն սոսկ իրենց դասակարգի ներկայացուցիչներն են, այլ առաջին հերթին կենդանի մարդիկ, որոնք արտացոլում են կենդանի իրականությունը։ Այդ պատճառով էլ նա գտնում էր, որ հանճարեղ գրողի ստեղծագործության, նրա բարոյական ու քաղաքական հայացքների միջև գոյություն ունեցող հակասությունների պատճառը պետք է որոնել հենց նրա ապրած ժամանակաշրջանում գոյություն ունեցող ռեալ հակասությունների արտացոլման մեջ։

3 Վ. Ի. Լենին, Երկեր (ռուսերեն), հ. 38, էջ 186։

«Եթե մեր առաջ իրոք որ խոշոր գեղագետն է, ապա նա հեղափոխության մի քանի թեկուզ և էական կողմերը պետք է որ արտացոլեր իր գրվածքներում», գրում է Վ. Ի. Լենինը Տոլստոյի մասին իր հանրահայտ հոդվածում։ Խոշոր գեղագետը, գրողը, ըստ Լենինի, չի կարող շրջանցել այն հարցերը, որոնք իր դարաշրջանի հիմնական խնդիրներն են հանդիսանում։ Եվ գեղարվեստագետն ու գրողը խոշոր են միայն այն դեպքում, երբ նրանք ճշմարտապատում կերպով են արտացոլում իրենց դարաշրջանը։

Այսպիսով, իր էսթետիկական հայացքներում Վ. Ի. Լենինը ելնում է այն լրանից, որ գրողն ու գեղագետը արտացոլելով օբյեկտիվ իրականությունը կարող են բարձրորակ գեղարվեստական երկեր ստեղծել միայն այն ժամանակ, երբ նրանց ստեղծագործությունը տոգորվում է ժողովրդականությամբ և առաջավոր գաղափարներով։

Լ. Ն. Տոլստոյի գեղարվեստական ստեղծագործությունների արժանիքը կայանում է նրանում, որ Տոլստոյ գեղագետի մոտ և նրա գեղարվեստական երկերում արտացոլվում են ռուսական հասարակ ժողովրդի, բազմամիլիոն գյուղացիական մասսաների իղձերն ու ձգտումները։ Հենց այդ պատճառով էլ Տոլստոյ գեղագետը, ի հակադրություն Տոլստոյ բարոյախոսի և քաղաքական գործիչի, սուր կերպով, անողոքաբար և կրքոտությամբ քննադատում է ցարական-բուրժուական կարգերը, ոստիկանական-ուղղափառ եկեղեցին, ցարական չինովնիկների կամայականությունները, նրանց կողմից կատարվող կեղծիքները, հարստահարությունները և ցարական դատարանն իր այլանդակությամբ։ Ցարական Ռուսաստանում իշխող այլանդակ բարքերի ճշմարտապատում ու ռեալիստական նկարագրությունը և նրանց անողոքաբար քննադատությունն է, որ բարձրացնում է Տոլստոյ գրողի երկերի արժեքը։ Հենց այդ է, որ նրա գրվածքները համաշխարհային գրականության լավագույն ստեղծագործությունների շարքում է դասում։

Այս ամենից ելնելով էլ Վ. Ի. Լենինն անչափ բարձր էր գնահատում Տոլստոյի գեղարվեստական ստեղծագործությունները։

Պրոլետարական մեծ գրող Մաքսիմ Գորկին Վլադիմիր Իլյիչի մասին գրած իր հիշողություններում, բերել է այն գնահատականը, որը տվել է Լ. Ն. Տոլստոյին որպես գրողի և գեղագետի.

«Ի՞նչպիսի հսկայական կունձ է, հը։ Ի՞նչպիսի խոշոր մարդ։ Այ, սա սիրելիս, գեղագետ է... Եվ գիտեք թե էլի ի՞նչն է զարմանալի։ Մինչև այս կոմսը իսկական մուժիկը գրականության մեջ չկար։

Հետո ինձ նայելով և իր աչքերը կկոցելով հարցրեց.

—Եվրոպայում ո՞ւմ կարելի է դնել նրա կողքին։

Եվ ինքն իրեն պատասխանեց.

—Ոչ ոքի։

Եվ ձեռները շփելով ժպտաց։ Գոհ էր»[4]։

Պրոլետարիատի հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինը մեծ գրողին ռուսական հեղափոխության հայելին է համարել այն պատճառով, որ նա իր ստեղծագործության և ուսմունքի մեջ արտացոլել է ռուսական առաջին, մեծ, ժողովրդա-

---

4 Ա. Մ. Գորկի, Երկերի ժողովածու (ռուսերեն), 1933, հ. 22, էջ 216։

կան հեղափոխության գյուղացիական-բուրժուական բնույթը, նրա բոլոր գլխավոր ուժեղ և միաժամանակ գլխավոր թույլ կողմերը։

Այսպիսին է Լ. Ն. Տոլստոյին տրված լենինյան գնահատականը։

Այժմ տեսնենք, թե ինչպես էր գնահատում Լ. Ն. Տոլստոյի ստեղծագործությունը և նրա ուսմունքը՝ տոլստոյականությունը մեծ Լենինի աշակերտ և անդուգական գինակից Սուրեն Սպանդարյանը։

Ո՞րն է գեղարվեստի և գրականության տեղն ու գերը հասարակական կյանքում, ի՞նչ խնդիրներով պետք է զբաղվեն գեղարվեստը, գրականությունը։

Այս հարցում նա հաստատուն մարքս-լենինյան դիրքերի վրա էր կանգնած. նա գտնում էր, որ գեղարվեստի ու գրականության խնդիրը պետք է հանդիսանա՝ ծառայել բոլոր ճնշվածների ու հարստահարվածների շահերի հետևողական պաշտպան ու առաջնորդ պրոլետարիատին՝ նրա այն պայքարում, որ մղվում էր հին, մարդու կողմից մարդու շահագործման վրա հիմնված կապիտալիստական հասարակությունը խորտակելու և շահագործումից ազատ, սոցիալիստական հասարակություն կառուցելու գործում։

Սուրեն Սպանդարյանը գտնում էր, որ գեղարվեստն ու գրականությունը իրենց բախտը պետք է կապեն բանվոր դասակարգի, նրա պայքարի և հաղթանակի հետ։ Նրանք պետք է այդպես վարվեն, որովհետև կապիտալիզմի օրով միայն պրոլետարական հեղափոխական շարժումն է, որ համընկնում է հասարակության զարգացման օբյեկտիվ բնույթ կրող օրենքներին, այսինքն համապատասխանում է հասարակական պրոգրեսին։

Գեղարվեստի ու գրականության հարցերում ունենալով այսպիսի տեսակետ և հաստատուն կանգնած լինելով մարքս-լենինյան էսթետիկայի դիրքերում, Սուրեն Սպանդարյանը պայքարում էր բուրժուական էսթետների և գեղարվեստի ու գրականության «համամարդկայնությունն» ու «անպարտիականությունը» պաշտպանող մարդկանց դեմ։ Նա հիմնովին սխալ էր համարում այն միտքը. որ գեղագետն ու գրողը պետք է դասակարգերից ու սոցիալական խավերից վեր կանգնած, դասակարգային պայքարից հեռու և անմասն «գերմարդիկ» լինեն և իրենց ստեղծագործության ասպարեզում հանդես գան որպես «ազատ», «բարուց ու չարից այն կողմը» կանգնած մարդիկ, ինչպես ասում էր գերմարդու թեորիայի ստեղծող Նիցշեն։

Ելնելով Վ. Ի. Լենինի «կորչի՛ գերմարդ գեղագետը» գրությունից, Ս. Սպանդարյանը ցույց տվեց, որ կապիտալիստական հասարակության մեջ գեղարվեստագետի և գրողի «ազատությունը» պարզապես ֆիկցիա էր, որովհետև կապիտալիզմի օրով ամեն բան դառնում է ապրանք, այսինքն ծախու և առնելու առարկա։ Այդ կանոնին ենթարկվում են ոչ միայն նյութական, այսինքն շոշափելի, առարկայական իրերը, այլև ոչ նյութական ու հոգևոր արտադրանքը. ինչպիսին են գիտությունը, տաղանդը, գեղարվեստը, գրականությունը, գեղագետի շնորհքը և այլն։

Այս դրությունից ելնելով նա գրել է. «Եվ իզուր են մեր գիտնականները, գրողները, նկարիչները մեծ-մեծ խոսում իրենց «ազատության» մասին, իզուր են իրենք իրենց բարձր դասում «շուկայից»։ Նրանք բուրժուազիայի ծառայողներն են և իրենց գործունեությունը համակերպում են բուրժուազիայի պահանջներին և ճաշակներին»[5]։

5 Ս. Ս. Սպանդարյան, Երկեր, հ. 1, էջ 118։

Նշանակում է ապադասակարգայնություն ու անպարտիականություն գեղարվեստի բնագավառում միանգամայն անհնարին է։ Անպարտիական գեղարվեստ էլ գոյություն չունի, որովհետև իրեն անպարտիական համարող գեղարվեստը ձեռնտու է միայն շահագործողներին, այսինքն՝ կապիտալիստներին։

«Պարտիականության և անպարտիականության մասին» իր հոդվածում Ս. Սպանդարյանը ցույց է տալիս, որ գրողը, գեղագետը և քաղաքական գործիչը չեն կարող ըստ էության անպարտիական լինել։ «Չէ որ յուրաքանչյուր հասարակական գործիչ (նշանակում է և գրող—Շ. Ա.) պետք է ունենա գործունեության այս կամ այն ծրագիրը, այս կամ այն «հավատո հանգանակը» հասարակական գործերի և սրանց ուղղության տենդենցի այս կամ այն հասկացողությունը»։ Եվ այնուհետև. «Հասարակական գործիչն առանց սոցիալ-քաղաքական որոշ դեմքի,—դա, գերմանացիների արտահայտությամբ, մի դատարկ աղիք է, որը կարելի է լցնել ինչով ուզես, դա մի հողմնացույց է, որը դառնում է քամու ուղղությամբ, դա ոչնչություն է, որի վրա կարող են աղդել բոլորն ու ամեն ինչ, վերջապես դա ամենազգվելի օպորտունիստն է, որի ամբողջ քաղաքականությունը հանգում է մոմենտին հարմարվելուն և այն էլ նվազագույն դիմադրության գծով»[6]։

Առաջ քաշելով և պաշտպանելով գեղարվեստի դասակարգայնությունն ու պարտիականությունը, Ս. Սպանդարյանը միաժամանակ պարզաբանել ու պաշտպանել է մարքս-լենինյան գեղագիտության այն հիմնական դրույթներից մեկը, որ գեղարվեստի դասակարգայնության և կամ պարտիականության ճանաչելն ու ընդունելը, երբեք չի նսեմացնում նրա հասարակական-գեղարվեստական արժեքը։ Երբ արվեստը պրոգրեսիվ մտքեր ու գաղափարներ է պրոպագանդում, դրանով իսկ նպաստում է հասարակության զարգացմանը.

Ելնելով իր ուսուցիչ Վ. Ի. Լենինի արտացոլման թեորիայից, Ս. Սպանդարյանը գտնում էր, որ գեղարվեստագետն իր ստեղծագործություններում արտացոլում է իրեն շրջապատող աշխարհը, որպես կենդանի մարդ։ Հենց այդ պատճառով էլ նա իրեն շրջապատող աշխարհի իրերի, առարկաների և երևույթների նկատմամբ չի կարող բոլորովին անտարբեր լինել։ Նա աշխարհի իրերը, առարկաները ու երևույթները ընկալում է նրանց շարժման, փոփոխման ու զարգացման պրոցեսում։ Գեղարվեստագետը, գրողը աշխարհը ընկալում է իր դասակարգի տեսանկյունով։ Գեղարվեստ, այսպիսով, հասարակական կյանքի արտահայտությունն է, սակայն գեղարվեստագետն ու գրողը այն արտացոլում են՝ նախ՝ ընդհանրացված և ոչ անմիջականորեն, և երկրորդ՝ իրենց դասակարգի ու պարտիայի շահերից ելնելով։

Հասկանալի է, որ Լ. Տոլստոյի հասարակական-քաղաքական ու բարոյական ուսմունքի, ինչպես և գեղարվեստական ստեղծագործության գնահատության հարցում Սուրեն Սպանդարյանը պետք է ելներ մարքս-լենինյան էսթետիկայի դրույթներից և այն բանից, թե ինչպիսի դեր է խաղալու գեղարվեստը հասարակական կյանքում ընդհանրապես։

1908 թվականին Ռուսաստանում տոնվեց մեծանուն գրող Լ. Ն. Տոլստոյի

---

6 Ս. Ս. Սպանդարյան, հ. 2, էջ 166—167։

ծննդյան ութսունամյակը։ «Բակինսկի Ռաբոչի» թերթը, որի ղեկավարներից մեկն էլ Սուրեն Սպանդարյանն էր, այդ առթիվ տպագրեց Վ. Ի. Լենինի «Լև Տոլստոյը որպես ռուսական հեղափոխության հայելին» հոդվածը։ Այս փաստն արդեն ցույց էր տալիս, որ խմբագրությունը Լ. Ն. Տոլստոյի ստեղծագործության և նրա ուսմունքի՝ տոլստոյականության գնահատության հարցերում ամբողջությամբ լենինյան դիրքերի վրա էր կանգնած։ Եվ իրոք, թերթում տպագրված բոլոր հոդվածներն էլ Լ. Ն. Տոլստոյի՝ լենինյան գնահատության ոգով են տոգորված։

Պրոլետարական-բոլշևիկական մամուլի կողմից հետևողական-պարտիական և անհաշտ դիրքավորումը դեպի Տոլստոյի քաղաքական ու բարոյական ուսմունքը, դեպի տոլստոյականությունը «ազնիվ զայրույթ» առաջացրեց բուրժուական լիբերալների աշխարհում։

Ակնհայտ է, որ բուրժուազիայի անկման շրջանում նրա գաղափարախոսները երբեք չեն ընդունել գեղարվեստի, գրականության, բարոյականության, կրոնի և այլ երևույթների, այսինքն հասարակական գիտակցության ձևերի դասակարգայնությունը և պարտիականությունը։ Գաղափարախոսության ասպարեզում այդ բուրժուազիան աշխատում է ապադասակարգայնության և անպարտիականության գրոշի տակ, որպեսզի թաքցնի նրանց պարտիականությունն ու դասակարգայնությունը և հեշտությամբ խաբի աշխատավորական բազմամիլիոն մասսաներին, շեղի նրանց դասակարգային պայքարի և պրոլետարական հեղափոխականության ճիշտ ուղուց։

Ելնելով իրենց դասակարգային շահերից, Բաքվի բուրժուական լիբերալներն էլ «համամարդկային» գեղարվեստ ու բարոյականություն էին քարոզում։

Բաքվի նավթատերերի օրգան «Բակու» և «Բակինսկի լիստոկ» թերթերն անհիմն կերպով սկսեցին մեղադրել բոլշևիկյան մամուլին այն բանի համար, որ իբր թե նեղ դասակարգային շահերից ելնելով, նա չէր ցանկանում տեսնել Լ. Ն. Տոլստոյի ուսմունքի՝ տոլստոյականության մեջ որևէ դրական բան և չէր ուզում այդ ուսմունքին օբյեկտիվ գնահատական տալ։ Բուրժուական մամուլը «Բակինսկի ռաբոչի» թերթին մեղադրում էր նրանում, որ իբր թե նա չէր ուզում բանվորներին ասել այն, թե ինչումն է կայանում պրոլետարիատի և ամբողջ աշխարհի աշխատավոր ժողովրդի համար դրականը Լ. Ն. Տոլստոյի ուսմունքի՝ տոլստոյականության մեջ։

Բոլշևիկյան-բանվորական թերթին Լ. Ն. Տոլստոյի ուսմունքի իբր թե ոչ օբյեկտիվ գնահատության մեջ մեղադրելով, բուրժուական լիբերալների մամուլը, դասակարգային շահերից ելնելով, մինչև երկինք էր բարձրացնում «չարին չհակառակելու» մասին Տոլստոյի ուսմունքը։ Նա ամեն կերպ աշխատում էր Տոլստոյի կրոնա-բարոյական այդ ուսմունքը պրոպագանդել բանվորական լայն զանգվածների շրջաններում։

Հասկանալի է, որ «Բակինսկի Ռաբոչի» թերթը և նրա ղեկավարներից մեկը հանդիսացող Սուրեն Սպանդարյանը պետք է հանդես գար բուրժուական մամուլի կողմից բոլշևիկյան լրագրի հասցեին ուղղված այդ անլուր հերյուրանքի դեմ։ Նա պետք է մարքս-լենինյան դրույթներ պաշտպաներ Լ. Ն. Տոլստոյի գեղարվեստական ստեղծագործության, ինչպես և նրա ուսմունքի՝ տոլստոյականության գնահատման հարցում։

Պարզ է նաև այն, որ մարքսիստական դիալեկտիկայից ելնելով, նա ժա-

մանակավորապես մի կողմ պետք է թողներ Լ. Ն. Տոլստոյին՝ որպես գրողի և գեղարվեստագետի: Նա պետք է անտարակույս շեշտը դներ նրա ուսմունքի գնահատության վրա, ցույց տար բուրժուական լիբերալներին պրոլետարիատի և նրա ավանգարդ բոլշևիկյան պարտիայի վերաբերմունքը դեպի տոլստոյականությունը՝ որպես քաղաքական և բարոյական ուսմունքի: Տոլստոյին որպես գեղարվեստագետի և բարոյախոսի գնահատություն տալը մեծ նշանակություն ուներ բանվորական լայն խավերին ճիշտ դիրքավորում և կողմնորոշում տալու համար, որպեսզի նրանք կարողանային ճիշտ գնահատել նրա ուսմունքը:

«Բակինսկի Ռաբոչի» թերթում տպագրած իր «Ազնիվ զայրույթ» վերնագիրը կրող հոդվածում Սուրեն Սպանդարյանը գրեց այն մասին, որ կապիտալիզմի դեմ մարտնչող պրոլետարիատն ու նրա պարտիան իրենց համար ոչ մի ուսանելի բան չեն գտնում Լ. Ն. Տոլստոյի հասարակական և կամ բարոյական ուսմունքի մեջ: Հետևաբար նրանք բուրժուազիայի նման չեն կարող կեղծավոր երեսպաշտություն անել: Նրանք բացեիբաց հայտարարում են, որ «չարին չհակառակվելու» մասին Տոլստոյի ուսմունքը ռեակցիոն է, որ նրա սոցիոլոգիական և բարոյական ուսմունքը խոչընդոտում է հասարակության զարգացմանը, որովհետև այդ ուսմունքը բացարձակապես անգործունեություն, քվիենտիզմ է քարոզում: Այնուհետև նա գրեց, որ պրոլետարիատը սկզբունքորեն դեմ է տոլստոյականությանը, Լ. Ն. Տոլստոյի ուսմունքի հենց այդ դրույթներին, որովհետև բանվոր դասակարգի հիմնական դասակարգային խնդիրն է պայքարել չարի դեմ, այսինքն կապիտալիստական վարձու ստրկության դեմ, խորտակել բռնի ուժի միջոցով կապիտալիզմն, ու անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցել:

Սուրեն Սպանդարյանը գտնում էր, որ իդեալականացնել Լ. Ն. Տոլստոյին և կամ նրա սոցիալական ուսմունք՝ տոլստոյականությունն անչափ վնասակար է պրոլետարիատի և հատկապես դասակարգային պայքարի ծավալման համար:

Ինչպես տեսնում ենք, Տոլստոյի սոցիալական և բարոյական ուսմունքի գնահատության հարցում կայուն բոլշևիկ Սուրեն Սպանդարյանը հաստատուն լենինյան դիրքերում էր կանգնած:

Այս տեսանկյունից էլ նա՝ որպես պրոլետարական հեղափոխական և հետևողական բոլշևիկ-լենինյան մերժում էր Լ. Ն. Տոլստոյ քարոզիչին և բարոյախոսին, դեն էր նետում նրա հասարակական-բարոյական ուսմունքը՝ տոլստոյականությունը:

* * *

Կայուն բոլշևիկ և լենինյան Սուրեն Սպանդարյանը լավ գիտեր, որ սոցիոլոգ ու բարոյախոս Տոլստոյը լիովին տարբերվում է գրող ու գեղագետ Տոլստոյից: Նա գիտեր, որ իր գեղարվեստական գրվածքներում Տոլստոյն անողոքաբար քննադատել է ոստիկանական-պաշտոնական եկեղեցին, ուղղափառ կրոնը, ցարական չինովնիկների կամայականությունները, նրանց կողմից կատարվող հարստահարությունները, կոպտությունն ու թալանը բուրժուական-կալվածատիրական Ռուսաստանում:

Լ. Ն. Տոլստոյի ստեղծագործության այդ երկությունը նա շատ լավ էր հասկանում: Նա գիտեր նաև, որ որչափ մեծ էր Տոլստոյը որպես գրող ու գե-

ղագետ, որչափ հանճարեղ էին նրա գեղարվեստական երկերը, նույնչափ էլ նա թույլ և անզոր էր, որպես բարոյախոս ու «նոր կյանքի» քարոզիչ։

Վիճաբանելով բուրժուական իմաստասերների հետ, որոնք նստել էին «Բակու» և «Բակինսկի Լիստոկ» բուրժուական թերթերի խմբագրություններում և ամեն կերպ աշխատում էին իդեալականացնել հատկապես Լ. Ն. Տոլստոյի ուսմունքը, այն տարածել բանվորական ամենալայն խավերի մեջ, Սուրեն Սպանդարյանն իր «Ազնիվ զայրույթ» հոդվածում մի անգամ ևս ցույց տվեց, թե ինչպիսին կարող է լինել մարքս-լենինյան դիալեկտիկական մոտեցումը Լ. Ն. Տոլստոյի նկատմամբ։

Դիմելով բուրժուական մամուլի ներկայացուցիչներին Ս. Սպանդարյանը հայտարարել է. «Մենք Տոլստոյին չենք գնահատել իբրև խոսքի արվեստագետի, իբրև մարդկային հոգին ճանաչողի. այդ առթիվ երկու կարծիք չի կարող լինել։ Մենք նրան գնահատել ենք իբրև քարոզչի, իբրև «նոր» կյանքի ուսուցչի և գտել ենք, որ նրա ուսմունքը վնասակար է, ռեակցիոն, չի համապատասխանում պրոլետարիատի շահերին, ձեռնտու է բուրժուազիային»[7]։

Այսպիսին է Տոլստոյ քարոզչի և բարոյախոսի գնահատականը լենինյան-մարքսիստ Ս. Սպանդարյանի կողմից։

Ինչ խոսք, որ սրանով չի սահմանափակվում Ս. Սպանդարյանի կողմից Տոլստոյին տրվող գնահատականն ընդհանրապես։ Այստեղ կանգ է առնվում հարցի մի կողմի վրա միայն, որովհետև նա էլ իր ուսուցիչ և մեծ գինակից Վ. Ի. Լենինի նման մեծ գովեստով է խոսել Տոլստոյ գրողի ու գեղագետի մասին, համարելով նրան հանճարեղ և տիտան։

Եթե իր «Ազնիվ զայրույթ» հոդվածում Սպանդարյանը հանդես եկավ քարոզիչ և բարոյախոս Տոլստոյի դեմ և մերժեց նրա ուսմունքը՝ տոլստոյականությունը, որպես ռեակցիոն ու պրոլետարիատի պայքարի համար վնասակար ուսմունք, ապա նա իր «Մեծարում, թե՞ ռեկլամ» հոդվածում, որ լույս տեսավ գրողի մահվանից մոտ երեք ամիս հետո, մարքս-լենինյան մոտեցում ցուցաբերեց ռուս մեծ գրողի ու գեղագետի նկատմամբ։ Նա գրում է. «Եվ ամեն մի երևույթ, ամեն մի փաստ, որ ունի գեթ որևէ կապ, գեթ հեռավոր առնչության մի նշույլ հանգուցյալ տիտանի կյանքի և ստեղծագործության հետ, բնականաբար հսկայական հետաքրքրություն է առաջ բերում հասարակության բոլոր խավերում։

Մարդ ուզում է մոտիկից ծանոթանալ հանճարեղ բանաստեղծի ու գրողի ամբողջ բազմազան հոգևոր կյանքին, ուզում է հասկանալ նրա երկերի այն անմահ հերոսներին, որոնց մեջ այնքան շատ բան կա, որն անձամբ ապրել ու զգացել է ինքը, անմահ հեղինակը»[8]։

Ինչպես տեսնում ենք, գովասանքի մեջ անչափ ժլատ և արժեքավորման՝ գործում անչափ խստապահանջ Սուրեն Սպանդարյանը մեծ ու բարձր գնահատական է տալիս «Պատերազմ և խաղաղություն», «Աննա Կարենինա», «Հարություն» և այլ վեպերի ու երկերի անմահ հեղինակի գեղարվեստական ստեղծագործությանը, ուր ներթափանցում են ժողովրդական մասսաների իղձերն ու ցանկությունները, որոնումներն ու ձգտումները, նրանց ուտոպիական-սոցիա-

---

7 Ս. Ս. Սպանդարյան, հ. 1, էջ 196։

8 Նույն տեղում, հ. 2, էջ 148։

լիստական տեսակետները։ Իր գեղարվեստական ստեղծագործություններում մեծ գրողը հանգես է գալիս ցարական իշխանության, ոստիկանական ուղղափառ եկեղեցու, չինովնիկական հարստահարումների ու կեղեքումների, գատական կամայականությունների ռեալիստական նկարագրությամբ և ցասումնալից կերպով բողոքում է նրանց դեմ։

Տոլստոյի պաշտպանության համար էր, որ Սուրեն Սպանդարյանը «Լիստոկ Կոպեյկա» լրագրում ցասումով գրեց այն, այսպես կոչված, դատական պրոցեսի մասին, որը կազմակերպել էր Թբիլիսիի պաշտպանների կորպորացիան Լ. Ն. Տոլստոյի «Հարությունը» վեպի հերոս Նեխլյուդովին դատապարտելու համար։

Ինչպես հայտնի է, «Հարությունը» վեպում Լ. Ն. Տոլստոյն իր սրտագին իղձերն ու ձգտումներն է դրսևորել և ցույց է տվել, թե որքան խոր ու բուզմակողմանիորեն ծանոթ է եղել ռուսական գյուղացիության կյանքին, նրա ձգտումներին ու մտորումներին։

Հանձին իր ստեղծած գեղարվեստական կերպար Նեխլյուդովի և նրա դատողությունների մեր առաջ ծավալվում է ինքը, մեծ գրող Լ. Ն. Տոլստոյը, որ խոսում է ռուսական գյուղացիության և կալվածատերերի փոխհարաբերության մասին, շարադրում ռուսական գյուղացիության տենչերն ու ձգտումները, միաժամանակ ցույց տալով, որ իր համակրանքը գյուղացիության կողմն է։

Ահա նրա անմահ վեպի հերոս Նեխլյուդովի խորհրդածությունները, որոնց նաև Լ. Ն. Տոլստոյի մտորումներն են.

«Ժողովրդական կարիքի գլխավոր պատճառը, որը գիտակցվում և միշտ էլ առաջադրվում էր իր, ժողովրդի կողմից, կայանում էր նրանում, որ հողատերերը ժողովրդի ձեռքից խլել էին այն հողը, որով նա կարող էր կերակրվել ու ապրել։ Մինչդեռ միանգամայն պարզ էր, որ երեխաներն ու ծերունիները մահանում էին այս բանից, որ նրանք խմելու կաթ չունեին, հող չունեին, որպեսզի անասուններն արածացնեին և հաց ու խոտ հավաքեին։ Միանգամայն պարզ էր, որ ժողովրդի ամբողջ դժբախտությունը, կամ այնուամենայնիվ նրա աղքատության մոտավոր և գլխավոր պատճառը այն բանում էր, որ նրան կերակրող հողը իրեն չէր պատկանում, այլ գտնվում էր այնպիսի մարդկանց ձեռքում, որոնք օգտվելով հողի նկատմամբ այդ իրավունքից, հենց նույն ժողովրդի աշխատանքով էին ապրում։ Հողը, որն անչափ անհրաժեշտ էր իրեն, որի պակասությունից մարդիկ մահանում էին, մշակվում էր հենց այդ, մինչև ծայր աստիճանի կարիքի վիճակին հասած մարդկանց ձեռքով, նրա համար, որպեսզի հողից ստացված հացը վաճառվեր արտասահմանում, և հողատերերը կարողանային իրենց համար շլյապաներ, տրոստներ, կառքեր, բրոնզներ ու այլ բաներ գնել»[9]։

Այսպիսին էր Նեխլյուդով-Տոլստոյի տեսակետը հողի, նրա իսկական տեր ու մշակող գյուղացու և ռուսական ձրիակեր ու մարդկանց արյունը տզրուկի նման ծծող կալվածատիրության մասին։

Նեխլյուդովի այս դատողությունը ցույց է տալիս, թե որ չափով Լ. Ն. Տոլստոյը կապված է եղել գյուղացիության հետ և ինչպես է նա արտացոլել իր

---

9 Լ. Ն. Տոլստոյ, Երկեր (ռուսերեն), հ. 11, 1948, էջ 190։

գեղարվեստական ստեղծագործության մեջ նախառևոլյուցիոն գյուղի կյանքը, իր մանրամասնությամբ։

Ահա Լ. Ն. Տոլստոյի հերոս Նեխլյուդովի գեմ էր կազմակերպվել այդ, այսպես կոչված, գրական-դատական պրոցեսը, որը կատարվել էր իբր թե մեծ գրողի հիշատակը մեծարելու նպատակով։

Իսկ ի՞նչ է ստացվել նման դատավարությունից։

Վրացական թատրոնի գահլիճը, որտեղ ընթացել էր այդ յուրօրինակ դատավարությունը, լիքն էր հանդիսատեսներով, երբ սկսվել է այդ, այսպես կոչված, գրական-դատավարությունը։

Նկարագրելով վերևում հիշված «դատավարության» պրոցեսը, Ս. Սպանդարյանը գտնում էր, որ պարոնայք դատապաշտպանները, ամենից անսքող, և ամենից մերկապարանոց դատական մրցություն էին կազմակերպել, ինչպես սովորական դատավարությունների ժամանակ։ Դատախազի դեր կատարողը պարզ է, որ «մեղադրում» էր, ելնելով օրենքի կողմից թույլատրված մեղադրական ամեն տեսակի պրիոմներից։ Դատապաշտպանները նույնպես ետ չէին մնում դատախազից գիմելով ամեն տեսակի «խորամանկության» ու ֆոկուսների, որպեսզի արդարացնեին իրենց «պաշտպանյալին»։

Նկարագրելով այս յուրահատուկ դատական «պրոցեսը» և զայրույթով մերժելով այն, Ս. Սպանդարյանը միաժամանակ ցույց է տվել իր վերաբերմունքը դեպի ռուսական աշխարհի մեծագույն գրողն ու գեղագետը, որի գեղարվեստական երկերը ոչ միայն ռուսական, այլև համաշխարհային գրականության գոհարներն են։ «Մեծ գրողը,—գրել է Սպանդարյանն իր հոդվածում,—հիանալի կերպով էր ըմբռնել ժամանակակից դատարանի էությունը։

Լսելով նրանց, ակամայից մեր առաջ կանգնեց «Հարություն» վեպում նկարագրված դատավարության պատկերը, «փայլուն փաստաբան» Ֆոնարկինի կերպարանքը։

... Նեխլյուդովի դատը եկավ միայն հաստատելու այդ պատկերի ճշտությունը։

Դա հասարակությանը զվարճացնող մի «աքլորակռիվ» էր։ Մտքի աղքատություն, աշխարահայացքի բացակայություն, աղքատություն գրական տեսակետից,—ահա Լ. Ն. Տոլստոյին տեղական փաստաբանների կողմից մեծարելու արդյունքը...

...Ինչու հանդես եկան երիտասարդ փաստաբանները, որոնցից մենք իրավամբ կարող էինք սպասել ավելի զգայուն, ավելի ակնածալից վերաբերմունք դեպի մեծ գրողի հիշատակը»[10]։

Այսպիսին էր Սուրեն Սպանդարյանի մոտեցումը մեծ գրողի, գեղարվեստական խոսքի մեծ վարպետի ու խոշոր ռեալիստ վիպասանի նկատմամբ։

Ս. Սպանդարյանի այս գնահատականի և մոտեցման մեջ մենք լենինյան շունչ և մարքսիստական դիալեկտիկա ենք տեսնում։

Ժխտելով Լ. Ն. Տոլստոյի «չարին չընդդիմանալու» կրոնական-բարոյական պահանջը, որը ձեռնտու էր շահագործողների համար։ Նրա հասարակական և բարոյական ուսմունքի մեջ և ոչ սի օգտակար ու պիտանի բան չտեսնելով մարտնչող պրոլետարիատի համար, Ս. Սպանդարյանը մերժում էր Տոլստոյ

10 Ս. Ս. Սպանդարյան, Երկեր, հ. 2, էջ 149։

փիլիսոփային, բարոյախոսին ու բաղաքական գործչին, ժխտում էր տոլստոյականությունը, որովհետև այն ռեակցիոն էր ու հետադիմական։

Միաժամանակ Սուրեն Սպանդարյանը իր մեծ ուսուցիչ և ավագ զինակից Վ. Ի. Լենինի նման և նրա հետ միասին, անչափ բարձր էր գնահատում Տոլստոյ գրողին, բանաստեղծին ու գեղագետին, համարելով նրան գեղարվեստական խոսքի մեծ վարպետ ու տիտան։

Հենց այդ գնահատությունից ելնելով էլ պահանջում էր ավելի զգայուն, ակնածանքով ու մեծ հարգանքով մոտենալ Լ. Ն. Տոլստոյի հիշատակին։

Հետևողական մարքսիստ լենինյան Ս. Սպանդարյանի կողմից Լ. Ն. Տոլստոյի ուսմունքին և նրա գեղարվեստական ստեղծագործությանը տրված գնահատականը խոշոր նշանակություն ունի մեր ժամանակաշրջանում ևս, երբ ՍՄԿ պարտիան պայքար է մղում գեղարվեստի ասպարեզում որոշ մարդկանց կողմից առաջ քաշված, այսպես կոչված, աբստրակցիոնիզմի դեմ. վերջինս իրեն հակադրում է սոցիալիստական ռեալիզմին՝ որպես ստեղծագործական մեթոդի և ժխտում է գեղարվեստի դասակարգայնությունն ու պարտիականությունը։

Ս. Սպանդարյանի գեղագիտական հայացքների յուրացումը կնպաստի մեր սովետական արվեստի ու գրականության հետագա զարգացմանը։